

Կ-719¹-01.09.2020,04.09.2020-ՊԻ-011

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» 1998 թվականի դեկտեմբերի 2-ի ՀՕ-265-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին մասի՝

1) 2-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«բնակչության պաշտպանություն՝ արտակարգ իրավիճակում մարդկանց կյանքի և առողջության պաշտպանությանը, վտանգների կանխմանը և նվազեցմանը, բնականոն կենսագործունեության ապահովմանը և վերականգնմանն ուղղված իրավական, կազմակերպական, ինժեներատեխնիկական փոխկապակցված միջոցառումների համալիր.».

2) 5-րդ պարբերությունում «աշխատանքների կատարում» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև կարանտին սահմանելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կիրառվող միջոցառումների իրականացում» բառերը.

3) 6-րդ պարբերությունում «մաս» բառից հետո լրացնել «(կարանտին սահմանելու դեպքում՝ համաճարակի գոտի)» բառերը.

4) 9-րդ պարբերությունում «և մանրէաբանական նյութերից» բառերը փոխարինել «, մանրէաբանական նյութերից և վարակիչ հիվանդություններից» բառերով:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել նոր «է» կետ.

«է) օրենքով նախատեսված այլ միջոցառումները:»:

Հոդված 3. Օրենքի 5-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում լրացնել նոր «ժէ» կետ.

«ժէ) կարանտին սահմանելու դեպքում օրենքով սահմանված միջոցառումների իրականացումը:».

2) լրացնել նոր 3-րդ մաս.

«Արտակարգ իրավիճակի հիմք հանդիսացող համաճարակով պայմանավորված բնակչության պաշտպանության հիմնական միջոցառումները և դրանց իրականացման կարգն ու առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքի 4.1-ին գլխով:»:

Հոդված 4. Օրենքի 7-րդ հոդվածում լրացնել նոր երկրորդ նախադասություն.

«Արտակարգ իրավիճակի հիմք հանդիսացող համաճարակով պայմանավորված կարանտին սահմանելու դեպքում բնակչության պաշտպանությունն իրականացվում է սույն օրենքի 4.1-ին գլխով սահմանված միջոցառումների իրականացման ձևով:»:

Հոդված 5. Օրենքի 10-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 10. Բնակչության անհատական պաշտպանությունը

1. Բնակչության անհատական պաշտպանությունը մարդկանց շնչառական օրգանները և մաշկը պաշտպանում է թունավոր գոլորշիների կաթիլներից, աերոզոլների ներգործությունից, ճառագայթային փոշիներից, ախտահարույց մանրէներից, թունավոր նյութերի ազդեցությունից, վարակիչ հիվանդություններից և թունավորումներից:

2. Սույն օրենքի 4.1-ին գլխով սահմանված կարանտին սահմանելու դեպքում բնակչության անհատական պաշտպանության միջոցների կիրառման անհրաժեշտությունը սահմանվում է կարանտին սահմանելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, իսկ կիրառվող անհատական պաշտպանության միջոցների ցանկը, դրանց կիրառման դեպքերը և կարգը՝ առողջապահության բնագավառում պետական կառավարման համակարգի

լիազոր մարմնի ղեկավարի կողմից՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով:»:

Հոդված 6. Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) լրացնել նոր «թ» կետ.

«թ) արտակարգ իրավիճակի հիմք հանդիսացող համաճարակի դեպքում ընդունում է որոշում կարանտին սահմանելու մասին.».

2) լրացնել նոր «ժ» կետ.

«ժ) կարանտին սահմանելու դեպքում իրականացնում է սույն օրենքի 4.1-ին գլխով սահմանված այլ լիազորություններ:»:

Հոդված 7. Օրենքի 14-րդ հոդվածում լրացնել նոր «ե» կետ.

«ե) կարանտին սահմանվելու դեպքում իրականացնում են սույն օրենքի 4.1-ին գլխով սահմանված այլ լիազորություններ:»:

Հոդված 8. Օրենքի 15-րդ հոդվածում լրացնել նոր «թ» կետ.

«թ) կարանտին սահմանվելու դեպքում իրականացնում են օրենքով սահմանված այլ լիազորություններ:»:

Հոդված 9. Օրենքի 16-րդ հոդվածում լրացնել նոր «է» կետ.

«է) կարանտին սահմանվելու դեպքում իրականացնում են օրենքով սահմանված այլ լիազորություններ:»:

Հոդված 10. Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել նոր «զ» կետ.

«զ) իրականացնում են կարանտին սահմանելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կիրառվող միջոցառումները, ինչպես նաև աջակցում այդ միջոցառումների կազմակերպմանը և իրականացմանը:»:

Հոդված 11. Օրենքում լրացնել նոր 4.1-ին գլուխ.

«ԳԼՈՒԽ 4.1

**ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՄԱՃԱՐԱԿՈՎ
ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԿԱՐԱՆՏԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հոդված 17.1. Սույն գլխի կիրառման շրջանակները

1. Արտակարգ իրավիճակի հիմք հանդիսացող համաճարակով պայմանավորված կարանտին սահմանելու պայմաններում բնակչության պաշտպանության և սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման առանձնահատկությունները, կարանտին սահմանելու մասին որոշմամբ կիրառվող միջոցառումների ցանկը, միջոցառումների կազմակերպման և իրականացման համար իրավասու մարմինները, միջոցառումների կազմակերպման և իրականացման կարգն ու առանձնահատկությունները սահմանվում են սույն գլխով:

Հոդված 17.2. Արտակարգ իրավիճակի հիմք հանդիսացող համաճարակով պայմանավորված կարանտին սահմանելու դեպքում կիրառվող միջոցառումները

1. Արտակարգ իրավիճակի հիմք հանդիսացող համաճարակով պայմանավորված կարանտին (այսուհետ սույն գլխում՝ կարանտին) սահմանելու դեպքում կարող են կիրառվել հետևյալ միջոցառումները՝

- 1) «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքով սահմանված կարանտինային և այլ սանիտարահամաճարակային միջոցառումներ՝ սույն գլխով սահմանված առանձնահատկությունների հաշվառմամբ.
- 2) հավաքներ կամ հանրային միջոցառումներ կազմակերպելու, անցկացնելու կամ դրանց մասնակցելու սահմանափակումներ.
- 3) իրավաբանական անձանց գործունեության սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների սահմանում.
- 4) ապրանքների փոխադրման սահմանափակումներ.
- 5) կրթական հաստատությունների գործունեության սահմանափակումներ.
- 6) սահմանափակումներ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում և այլ հաստատություններում:

1. Սույն հոդվածով սահմանված միջոցառումները կիրառվում են բացառապես կարանտին սահմանելու հիմք հանդիսացած հանգամանքների, ներառյալ՝ հանրության համար վտանգավոր վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու, դրանց հետևանքները վերացնելու, անձանց և հանրության առողջության պահպանման նպատակներով և պետք է համաչափ լինեն այդ նպատակներին: Կարանտինի պայմաններում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործողությունները պետք է համարժեք լինեն կարանտին սահմանելու հիմք հանդիսացած հանգամանքներով պայմանավորված իրավիճակին:

2. Սույն հոդվածով սահմանված միջոցառումների կիրառումը չի կարող խոչընդոտել Ազգային ժողովի, Սահմանադրական դատարանի, դատարանների, Մարդու իրավունքների պաշտպանի, զինված ուժերի, ոստիկանության զորքերի և սահմանապահ զորքերի բնականոն գործունեությունը:

Հոդված 17.3. Կարանտինային և այլ սանիտարահամաճարակային միջոցառումների կիրառման առանձնահատկությունները արտակարգ իրավիճակի հիմք հանդիսացող համաճարակի դեպքում

1. Կարանտին սահմանելու դեպքում, հաշվի առնելով սույն գլխով սահմանված առանձնահատկությունները, կարող են կիրառվել «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքով սահմանված կարանտինային և սանիտարահամաճարակային հետևյալ միջոցառումները.

- 1) համաճարակի (կարանտինային) գոտում մուտքի և ելքի հատուկ ռեժիմի սահմանում.
- 2) «Պետական սահմանի մասին» օրենքի 16-րդ հոդվածով նախատեսված պետական սահմանով հաղորդակցության ժամանակավոր դադարեցում կամ սահմանափակում.
- 3) անձանց ազատ տեղաշարժվելու իրավունքի և տրանսպորտային միջոցների տեղաշարժման սահմանափակումներ.
- 4) օբսերվացիա.
- 5) ինքնամեկուսացում.

6) մեկուսացում:

2. Կարանտին սահմանելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ (այսուհետ սույն գլխում՝ կարանտին սահմանելու մասին որոշում) կարող է սահմանվել մուտքի և ելքի հատուկ ռեժիմ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում, կամ դրա առանձին տարածքներում: Կարանտին սահմանելու մասին որոշմամբ կարող է արգելվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց մուտքը Հայաստանի Հանրապետության տարածք (այդ թվում՝ սահմանվել Հայաստանի Հանրապետություն մուտքի հատուկ կանոններ), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ելքը Հայաստանի Հանրապետության տարածքից:

3. Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործող անձանց նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելուց անմիջապես հետո կարանտին սահմանելու մասին որոշմամբ սահմանված կարգով առողջապահության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետերում կարող են կիրառվել սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարանտինային և սանիտարահամաճարակային միջոցառումները:

Հոդված 17.4. Հավաքներ կամ հանրային միջոցառումներ կազմակերպելու, անցկացնելու կամ դրանց մասնակցելու սահմանափակումներ

1. Կարանտին սահմանելու մասին որոշմամբ կարող են կիրառվել հավաքներ կազմակերպելու, անցկացնելու կամ դրանց մասնակցելու սահմանափակումներ, ինչպես նաև հանրային միջոցառումներ կազմակերպելու, անցկացնելու կամ դրանց մասնակցելու արգելքներ կամ սահմանափակումներ:

2. Սույն հոդվածի իմաստով հանրային են համարվում անձանց սոցիալական, մշակութային, կրթական, սպորտային կամ այլ ժամանցային կարիքների բավարարմանը ուղղված միջոցառումները, ներառյալ՝

1) համերգները, ցուցահանդեսները, ցուցադրությունները, թատերական ներկայացումները, կրթական այլ միջոցառումները.

2) տոնական և հիշատակի միջոցառումները, ներառյալ՝ ծննդյան (տարեդարձի), հարսանյաց (նշանադրության) միջոցառումները, հոգեհանգստի և հուղարկավորության արարողությունները:

3. Հավաքներ կազմակերպելու, անցկացնելու կամ դրանց մասնակցելու սահմանափակումների կիրառման նկատմամբ հսկողությունն իրականացնում է Ոստիկանությունը:

4. Հանրային միջոցառումներ կազմակերպելու, անցկացնելու կամ դրանց մասնակցելու սահմանափակումների կամ արգելքների կիրառման նկատմամբ հսկողությունն իրականացնում են Ոստիկանությունը և կարանտին սահմանելու մասին որոշմամբ սահմանված տեսչական մարմինները: Հանրային միջոցառումներ կազմակերպելու, անցկացնելու կամ դրանց մասնակցելու սահմանափակումների կամ արգելքների պահանջների խախտումներ հայտնաբերելու դեպքում կիրառվում են պատասխանատվության միջոցներ:

5. Հանրային միջոցառումներ կազմակերպելու, անցկացնելու կամ դրանց մասնակցելու սահմանափակումների կամ արգելքների պահանջների խախտումներ հայտնաբերելու դեպքում Ոստիկանությունը հանրային միջոցառում կազմակերպելու, անցկացնելու կամ հանրային միջոցառումը՝ դրան մասնակցելու սահմանափակումների կամ արգելքների պահանջներին համապատասխանեցնելու կամ դադարեցնելու պահանջով դիմում է հանրային միջոցառման կազմակերպչին, որը պարտավոր է այդ մասին անմիջապես տեղեկացնել հանրային միջոցառման մասնակիցներին: Հանրային միջոցառման կազմակերպչի բացակայության կամ նրանց կողմից Ոստիկանության պահանջը չկատարելու դեպքերում Ոստիկանության ներկայացուցիչը մասնակիցներից պահանջում է դադարեցնել հանրային միջոցառումը՝ սահմանելով ողջամիտ ժամկետ: Միաժամանակ Ոստիկանության կամ համապատասխան տեսչական մարմնի ներկայացուցիչը հանրային միջոցառման մասնակիցներին նախազգուշացնում է սահմանված ժամկետում հանրային միջոցառումը կամովին չդադարեցնելու դեպքում հանրային միջոցառումը ցրելու, ներառյալ՝ «Ոստիկանության մասին» օրենքով նախատեսված հատուկ միջոցներ, ինչպես նաև վարչական պատասխանատվության միջոցներ կիրառելու Ոստիկանության լիազորության մասին:

Հոդված 17.5. Տնտեսական գործունեության և ծառայությունների մատուցման, ինչպես նաև այլ կազմակերպությունների գործունեության սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների սահմանում

1. Կարանատին սահմանելու մասին որոշմամբ կարող են սահմանվել տնտեսական գործունեության առանձին տեսակների և ծառայությունների մատուցման, ինչպես նաև տնտեսական գործունեությամբ չգբաղվող այլ կազմակերպությունների գործունեության սանիտարահամաճարակային անվտանգության կանոններ:

2. Կարանատին սահմանելու մասին որոշմամբ կարող է կիրառվել կարանտին սահմանելու մասին որոշմամբ սահմանված տնտեսական գործունեության տեսակներով գբաղվող կամ ծառայություններ մատուցող տնտեսվարող սուբյեկտների և տնտեսական գործունեությամբ չգբաղվող այլ կազմակերպությունների (այսուհետ սույն հոդվածում՝ կազմակերպություններ) կողմից սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների կիրառման նկատմամբ վերահսկողության իրականացում:

3. Սույն հոդվածով նախատեսված սահմանափակումների պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է առողջապահության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը՝ բացառությամբ սննդամթերքի վաճառքով գբաղվող առևտրի օբյեկտների, սննդամթերք արտադրող տնտեսվարող սուբյեկտների կամ հանրային սննդի օբյեկտների, որոնց դեպքում սույն հոդվածով նախատեսված սահմանափակումների պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է սննդամթերքի անվտանգության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված վերահսկողությունը համապատասխան տեսչական մարմինն իրականացնում է կազմակերպություններ ստուգայցերի միջոցով՝ տվյալ տեսչական մարմնի ղեկավարի գրավոր հանձնարարությամբ: Այլ տեսչական մարմինները կարող են փոխօգնության շրջանակներում ներգրավվել ոլորտային ստուգայցերի

իրականացմանը՝ Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի հրամանով:

5. Ստուգայցն իրականացվում է առանց նախնական ծանուցման: Ստուգայցի նպատակը, ինչպես նաև ստուգայցն իրականացնող տեսչական մարմնի ներկայացուցչի գործողությունները չեն կարող դուրս գալ սույն գլխով սահմանված և կարանտին սահմանելու մասին որոշմամբ կիրառվող միջոցառումների կազմակերպման և իրականացման և սահմանափակումների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացման նպատակից:

6. Ստուգայցի ընթացքում կարանտին սահմանելու մասին որոշմամբ կիրառվող միջոցառումների և սահմանափակումների խախտումներ հայտնաբերելու դեպքում վերահսկողություն իրականացնող համապատասխան տեսչական մարմնի ներկայացուցիչը նախազգուշացնում է կազմակերպությանը (այդ թվում՝ գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում ֆիզիկական անձանց կողմից իրականացվող վաճառքը)՝ միջոցառումների և սահմանափակումների խախտման մասին, տալիս հանձնարարականներ բացահայտված խախտումները վերացնելու վերաբերյալ՝ դրանց կատարման համար սահմանելով ժամկետներ:

7. Ստուգայցի արդյունքում կարանտին սահմանելու մասին որոշմամբ կիրառվող միջոցառումների և սահմանափակումների խախտումներ հայտնաբերելու դեպքում վերահսկողություն իրականացնող համապատասխան տեսչական մարմինը կիրառում է վարչական պատասխանատվության միջոցներ:

8. Կարանտին սահմանելու դեպքում կազմակերպությունների նկատմամբ հսկողության իրականացմանը կարող են մասնակցել Ոստիկանությունը և կարանտին սահմանելու մասին որոշմամբ սահմանված այլ տեսչական մարմինները, որոնք կարանտին սահմանելու մասին որոշմամբ կիրառվող միջոցառումների խախտումներ հայտնաբերելու դեպքում պարտավոր են արձանագրել համապատասխան խախտումները և անմիջապես այդ մասին տեղեկացնել վերահսկողություն իրականացնող համապատասխան տեսչական մարմնին՝ սույն հոդվածի 4-ից 7-րդ մասերով սահմանված կարգով վերահսկողություն իրականացնելու համար:

9. Սույն հոդվածով նախատեսված սանիտարահամաճարակային անվտանգության կանոնները սահմանվում են լիազոր մարմնի ղեկավարի կողմից:

Հոդված 17.6. Ապրանքների փոխադրման սահմանափակումներ

1. Կարանտին սահմանելու մասին որոշմամբ կարող են սահմանվել որոշակի ապրանքների կամ դրանց առանձին խմբաքանակների արտահանման կամ ներմուծման սահմանափակումներ:

Հոդված 17.7. Կրթական հաստատությունների գործունեության սահմանափակումներ

1. Կարանտին սահմանելու մասին կառավարության որոշմամբ կարող է սահմանվել, որ պետական, համայնքային և ոչ պետական հանրակրթական (այդ թվում՝ նախադպրոցական), նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում, արտադպրոցական դաստիարակություն իրականացնող (մանկապատանեկան ստեղծագործական և գեղագիտական կենտրոններ, երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ, ակումբներ, մարզադպրոցներ, առողջարարական ճամբարներ և արտադպրոցական դաստիարակություն իրականացնող այլ կազմակերպություններ) կազմակերպություններում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում գործող միջազգային ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ կրթական հաստատություն) ուսումնական գործընթացը կարող է իրականացվել միայն առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով սահմանված սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների պահպանմամբ: Սույն կետով սահմանված սահմանափակումը չի տարածվում հեռավար (դիստանցիոն) ձևով իրականացվող կրթական ծրագրի, ինչպես նաև ռազմական ուսումնական հաստատությունների նկատմամբ:

2. Կրթական հաստատությունների գործունեության սահմանափակումների նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է առողջապահության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված վերահսկողությունը տեսչական մարմինն իրականացնում է կրթական հաստատություններ ստուգայցերի միջոցով՝ տեսչական մարմնի ղեկավարի գրավոր հանձնարարությամբ: Ստուգայցի

նպատակը, ինչպես նաև ստուգայցն իրականացնող տեսչական մարմնի ներկայացուցչի գործողությունները չեն կարող դուրս գալ սույն գլխով սահմանված և կարանտին սահմանելու մասին որոշմամբ կիրառվող միջոցառումների կազմակերպման և իրականացման և սահմանափակումների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացման նպատակից:

4. Ստուգայցի ընթացքում կարանտին սահմանելու մասին որոշմամբ կիրառվող միջոցառումների և սահմանափակումների խախտումներ հայտնաբերելու դեպքում տեսչական մարմնի ներկայացուցիչը նախազգուշացնում է կրթական հաստատությանը՝ միջոցառումների և սահմանափակումների խախտման մասին, տալիս հանձնարարականներ բացահայտված խախտումները վերացնելու վերաբերյալ՝ դրանց կատարման համար սահմանելով ժամկետներ:

5. Ստուգայցի արդյունքում կարանտին սահմանելու մասին որոշմամբ կիրառվող միջոցառումների և սահմանափակումների խախտումներ հայտնաբերելու դեպքում կիրառում է վարչական պատասխանատվության միջոցներ:

6. Կարանտին սահմանելու դեպքում կրթական հաստատության գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացմանը կարող է մասնակցել նաև կրթության ոլորտի տեսչական մարմինը, որը կարանտին սահմանելու մասին որոշմամբ կիրառվող միջոցառումների և սահմանափակումների խախտումներ հայտնաբերելու դեպքում պարտավոր է արձանագրել համապատասխան խախտումները և անմիջապես այդ մասին տեղեկացնել առողջապահության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնին:

Հոդված 17.8. Սահմանափակումներ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում և այլ հաստատություններում

1. Կարանտինի պայմաններում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում որպես սահմանափակում կարող է կիրառվել համապատասխան մարմնի աշխատանքների կազմակերպման, գործառույթների իրականացման ձևերի և եղանակների ժամանակավոր փոփոխություն՝ կարանտին սահմանելու մասին որոշմամբ սահմանված կարգին համապատասխան: Սույն մասում սահմանված սահմանափակումները կիրառվում են՝

- 1) պետական կառավարման համակարգի մարմիններում՝ կարանտին սահմանելու մասին որոշմամբ,
 - 2) տեղական ինքնակառավարման մարմիններում՝ համայնքի ավագանու,
 - 3) այլ մարմիններում՝ համապատասխան մարմնի ղեկավարի որոշմամբ:
2. Կարանտին սահմանելու մասին որոշմամբ նախատեսված լինելու դեպքում կարող են կիրառվել այլ հաստատությունների գործունեության սահմանափակումներ՝ համապատասխան հաստատության ղեկավարի որոշմամբ: Սույն մասի իմաստով այլ հաստատությունների և կիրառվող սահմանափակումների ցանկը սահմանվում է կարանտին սահմանելու մասին որոշմամբ:

Հոդված 17.9. Սույն գլխով նախատեսված ակտերի և գործողությունների (անգործության) բողոքարկումը

1. Կարանտինի պայմաններում սույն գլխով սահմանված միջոցառումների կիրառման շրջանակներում սույն գլխով նախատեսված մարմինների ակտերը ենթակա են անհապաղ կատարման, բացառությամբ կարանտին սահմանելու մասին որոշմամբ կիրառվող միջոցառումների խախտման դեպքում կայացված ակտերի::
2. Կարանտինի պայմաններում սույն գլխով սահմանված միջոցառումների կիրառման շրջանակներում սույն գլխով նախատեսված մարմինների ակտերը, գործողությունները (անգործությունը) կարող են բողոքարկվել վարչական կարգով կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում: Սույն մասով նախատեսված բողոքարկումը չի կասեցնում համապատասխան ակտի կատարումը, բացառությամբ կարանտին սահմանելու մասին որոշմամբ կիրառվող միջոցառումների խախտման դեպքում կայացված ակտերի::»:

Հոդված 12. Օրենքի 19-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 19. Անձանց իրավունքների երաշխիքները արտակարգ իրավիճակներում

1. Յուրաքանչյուր ֆիզիկական անձ իրավունք ունի ստանալ ճշգրիտ տեղեկություն արտակարգ իրավիճակների, դրանց առաջացման վտանգի և իր

պաշտպանվածության աստիճանի մասին, եթե այդպիսի տեղեկության տրամադրումը արգելված չէ օրենքով:

2. Ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնց գույքը կամ այլ միջոցներն օգտագործվել են արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման նպատակով, իրավունք ունեն ստանալու համարժեք փոխհատուցում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերում և կարգով:»:

Հոդված 13. Օրենքի 22-րդ հոդվածում լրացնել նոր երկրորդ նախադասություն.

«Կարանտին սահմանելու դեպքում սույն հոդվածով նախատեսված նյութատեխնիկական ապահովման և ֆինանսավորման դեպքերը, կարգն ու պայմանները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:»:

Հոդված 14. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից հետո՝ անմիջապես:

|

Կ-719¹-01.09.2020,04.09.2020-ՊԻ-011/

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» 1998 թվականի դեկտեմբերի 2-ի ՀՕ-265-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին մասի՝

1) 2-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«բնակչության պաշտպանություն՝ արտակարգ իրավիճակում մարդկանց կյանքի և առողջության պաշտպանությանը, վտանգների կանխմանը և նվազեցմանը, բնականոն կենսագործունեության ապահովմանը և վերականգմանն ուղղված իրավական, կազմակերպական, ինժեներատեխնիկական փոխկապակցված միջոցառումների համալիր.».».

2) 5-րդ պարբերությունում «աշխատանքների կատարում» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև կարանտին սահմանելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կիրառվող միջոցառումների իրականացում» բառերը.

3) 6-րդ պարբերությունում «մաս» բառից հետո լրացնել «(կարանտին սահմանելու դեպքում՝ համաճարակի գոտի)» բառերը.

4) 9-րդ պարբերությունում «և մանրէաբանական նյութերից» բառերը փոխարինել «, մանրէաբանական նյութերից և վարակիչ հիվանդություններից» բառերով:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել նոր «է» կետ.

«է) օրենքով նախատեսված այլ միջոցառումները:»:

Հոդված 3. Օրենքի 5-րդ հոդվածի`

1) 1-ին մասում լրացնել նոր «ժէ» կետ.

«ժէ) կարանտին սահմանելու դեպքում օրենքով սահմանված միջոցառումների իրականացումը:»:

2) լրացնել նոր 3-րդ մաս.

«Արտակարգ իրավիճակի հիմք հանդիսացող համաճարակով պայմանավորված բնակչության պաշտպանության հիմնական միջոցառումները և դրանց իրականացման կարգն ու առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքի 4.1-ին գլխով:»:

Հոդված 4. Օրենքի 7-րդ հոդվածում լրացնել նոր երկրորդ նախադասություն.

«Արտակարգ իրավիճակի հիմք հանդիսացող համաճարակով պայմանավորված կարանտին սահմանելու դեպքում բնակչության պաշտպանությունն իրականացվում է սույն օրենքի 4.1-ին գլխով սահմանված միջոցառումների իրականացման ձևով:»:

Հոդված 5. Օրենքի 10-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 10. Բնակչության անհատական պաշտպանությունը

1. Բնակչության անհատական պաշտպանությունը մարդկանց շնչառական օրգանները և մաշկը պաշտպանում է թունավոր գոլորշիների կաթիլներից, աերոզոլների ներգործությունից, ճառագայթային փոշիներից, ախտահարույց մանրէներից, թունավոր նյութերի ազդեցությունից, վարակիչ հիվանդություններից և թունավորումներից:

2. Սույն օրենքի 4.1-ին գլխով սահմանված կարանտին սահմանելու դեպքում բնակչության անհատական պաշտպանության միջոցների կիրառման անհրաժեշտությունը սահմանվում է կարանտին սահմանելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, իսկ կիրառվող անհատական պաշտպանության միջոցների ցանկը, դրանց կիրառման դեպքերը և կարգը`

առողջապահության բնագավառում պետական կառավարման համակարգի լիազոր մարմնի ղեկավարի կողմից՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով:»:

Հոդված 6. Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) լրացնել նոր «թ» կետ.

«թ) արտակարգ իրավիճակի հիմք հանդիսացող համաճարակի դեպքում ընդունում է որոշում կարանտին սահմանելու մասին.».

2) լրացնել նոր «ժ» կետ.

«ժ) կարանտին սահմանելու դեպքում իրականացնում է սույն օրենքի 4.1-ին գլխով սահմանված այլ լիազորություններ:»:

Հոդված 7. Օրենքի 14-րդ հոդվածում լրացնել նոր «ե» կետ.

«ե) կարանտին սահմանվելու դեպքում իրականացնում են սույն օրենքի 4.1-ին գլխով սահմանված այլ լիազորություններ:»:

Հոդված 8. Օրենքի 15-րդ հոդվածում լրացնել նոր «թ» կետ.

«թ) կարանտին սահմանվելու դեպքում իրականացնում են օրենքով սահմանված այլ լիազորություններ:»:

Հոդված 9. Օրենքի 16-րդ հոդվածում լրացնել նոր «է» կետ.

«է) կարանտին սահմանվելու դեպքում իրականացնում են օրենքով սահմանված այլ լիազորություններ:»:

Հոդված 10. Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել նոր «զ» կետ.

«զ) իրականացնում են կարանտին սահմանելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կիրառվող միջոցառումները, ինչպես նաև աջակցում այդ միջոցառումների կազմակերպմանը և իրականացմանը:»:

Հոդված 11. Օրենքում լրացնել նոր 4.1-ին գլուխ.

«ԳԼՈՒԽ 4.1

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՄԱՃԱՐԱԿՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԿԱՐԱՆՏԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 17.1. Սույն գլխի կիրառման շրջանակները

1. Արտակարգ իրավիճակի հիմք հանդիսացող համաճարակով պայմանավորված կարանտին սահմանելու պայմաններում բնակչության պաշտպանության և սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման առանձնահատկությունները, կարանտին սահմանելու մասին որոշմամբ կիրառվող միջոցառումների ցանկը, միջոցառումների կազմակերպման և իրականացման համար իրավասու մարմինները, միջոցառումների կազմակերպման և իրականացման կարգն ու առանձնահատկությունները սահմանվում են սույն գլխով:

Հոդված 17.2. Արտակարգ իրավիճակի հիմք հանդիսացող համաճարակով պայմանավորված կարանտին սահմանելու դեպքում կիրառվող միջոցառումները

1. Արտակարգ իրավիճակի հիմք հանդիսացող համաճարակով պայմանավորված կարանտին (այսուհետ սույն գլխում՝ կարանտին) սահմանելու դեպքում կարող են կիրառվել հետևյալ միջոցառումները՝

7) «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքով սահմանված կարանտինային և այլ սանիտարահամաճարակային միջոցառումներ՝ սույն գլխով սահմանված առանձնահատկությունների հաշվառմամբ.

8) հավաքներ կամ հանրային միջոցառումներ կազմակերպելու, անցկացնելու կամ դրանց մասնակցելու սահմանափակումներ.

9) իրավաբանական անձանց գործունեության սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների սահմանում.

10) ապրանքների փոխադրման սահմանափակումներ.

11) կրթական հաստատությունների գործունեության սահմանափակումներ.

12) սահմանափակումներ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում և այլ հաստատություններում:

3. Սույն հոդվածով սահմանված միջոցառումները կիրառվում են բացառապես կարանտին սահմանելու հիմք հանդիսացած հանգամանքների, ներառյալ՝ հանրության համար վտանգավոր վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու, դրանց հետևանքները վերացնելու, անձանց և հանրության առողջության պահպանման նպատակներով և պետք է համաչափ լինեն այդ նպատակներին: Կարանտինի պայմաններում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործողությունները պետք է համարժեք լինեն կարանտին սահմանելու հիմք հանդիսացած հանգամանքներով պայմանավորված իրավիճակին:

4. Սույն հոդվածով սահմանված միջոցառումների կիրառումը չի կարող խոչընդոտել Ազգային ժողովի, Սահմանադրական դատարանի, դատարանների ~~և~~ Մարդու իրավունքների պաշտպանի, զինված ուժերի, ոստիկանության զորքերի և սահմանապահ զորքերի բնականոն գործունեությունը:

Հոդված 17.43. Կարանտինային և այլ սանիտարահամաճարակային միջոցառումների կիրառման առանձնահատկությունները արտակարգ իրավիճակի հիմք հանդիսացող համաճարակի դեպքում

1. Կարանտին սահմանելու դեպքում, հաշվի առնելով սույն գլխով սահմանված առանձնահատկությունները, կարող են կիրառվել «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքով սահմանված կարանտինային և սանիտարահամաճարակային հետևյալ միջոցառումները.

1) համաճարակի (կարանտինային) գոտում մուտքի և ելքի հատուկ ռեժիմի սահմանում.

2) «Պետական սահմանի մասին» օրենքի 16-րդ հոդվածով նախատեսված պետական սահմանով հաղորդակցության ժամանակավոր դադարեցում կամ սահմանափակում.

3) անձանց ազատ տեղաշարժվելու իրավունքի և տրանսպորտային միջոցների տեղաշարժման սահմանափակումներ.

4) օրսերվացիա.

5) ինքնամեկուսացում.

6) մեկուսացում:

2. Կարանտին սահմանելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ (այսուհետ սույն գլխում՝ կարանտին սահմանելու մասին որոշում) կարող է սահմանվել մուտքի և ելքի հատուկ ռեժիմ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում, կամ դրա առանձին տարածքներում: Կարանտին սահմանելու մասին որոշմամբ կարող է արգելվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց մուտքը Հայաստանի Հանրապետության տարածք (այդ թվում՝ սահմանվել Հայաստանի Հանրապետություն մուտքի հատուկ կանոններ), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ելքը Հայաստանի Հանրապետության տարածքից:

3. Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործող անձանց նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելուց անմիջապես հետո կարանտին սահմանելու մասին որոշմամբ սահմանված կարգով առողջապահության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետերում կարող են կիրառվել սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարանտինային և սանիտարահամաճարակային միջոցառումները:

Հոդված 17.54. Հավաքներ կամ հանրային միջոցառումներ կազմակերպելու, անցկացնելու կամ դրանց մասնակցելու սահմանափակումներ

1. Կարանտին սահմանելու մասին որոշմամբ կարող են կիրառվել հավաքներ կազմակերպելու, անցկացնելու կամ դրանց մասնակցելու սահմանափակումներ, ինչպես նաև հանրային միջոցառումներ կազմակերպելու, անցկացնելու կամ դրանց մասնակցելու արգելքներ կամ սահմանափակումներ:

2. Սույն հոդվածի իմաստով հանրային են համարվում անձանց սոցիալական, մշակութային, կրթական, սպորտային կամ այլ ժամանցային կարիքների բավարարմանը ուղղված միջոցառումները, ներառյալ՝

1) համերգները, ցուցահանդեսները, ցուցադրությունները, թատերական ներկայացումները, կրթական այլ միջոցառումները.

2) տոնական և հիշատակի միջոցառումները, ներառյալ՝ ծննդյան (տարեդարձի), հարսանյաց (նշանադրության) միջոցառումները, հոգեհանգստի և հուղարկավորության արարողությունները:

3. Հավաքներ կազմակերպելու, անցկացնելու կամ դրանց մասնակցելու սահմանափակումների կիրառման նկատմամբ վերահսկողությունն հսկողությունն իրականացնում է Ոստիկանությունը:

4. Հանրային միջոցառումներ կազմակերպելու, անցկացնելու կամ դրանց մասնակցելու սահմանափակումների կամ արգելքների կիրառման նկատմամբ վերահսկողությունն հսկողությունն իրականացնում են Ոստիկանությունը և կարանտին սահմանելու մասին որոշմամբ սահմանված տեսչական մարմինները: Հանրային միջոցառումներ կազմակերպելու, անցկացնելու կամ դրանց մասնակցելու սահմանափակումների կամ արգելքների պահանջների խախտումներ հայտնաբերելու դեպքում կիրառվում են պատասխանատվության միջոցներ:

5. Հանրային միջոցառումներ կազմակերպելու, անցկացնելու կամ դրանց մասնակցելու սահմանափակումների կամ արգելքների պահանջների խախտումներ հայտնաբերելու դեպքում Ոստիկանությունը հանրային միջոցառում կազմակերպելու, անցկացնելու կամ հանրային միջոցառումը՝ դրան մասնակցելու սահմանափակումների կամ արգելքների պահանջներին համապատասխանեցնելու կամ դադարեցնելու պահանջով դիմում է հանրային միջոցառման կազմակերպչին, որը պարտավոր է այդ մասին անմիջապես տեղեկացնել հանրային միջոցառման մասնակիցներին: Հանրային միջոցառման կազմակերպչի բացակայության կամ նրանց կողմից Ոստիկանության պահանջը չկատարելու դեպքերում Ոստիկանության ներկայացուցիչը մասնակիցներից պահանջում է դադարեցնել հանրային միջոցառումը՝ սահմանելով ողջամիտ ժամկետ: Միաժամանակ Ոստիկանության կամ համապատասխան տեսչական մարմնի ներկայացուցիչը հանրային միջոցառման մասնակիցներին նախազգուշացնում է սահմանված ժամկետում հանրային միջոցառումը կամովին չդադարեցնելու դեպքում հանրային միջոցառումը ցրելու, ներառյալ՝

«Ոստիկանության մասին» օրենքով նախատեսված հատուկ միջոցներ, ինչպես նաև վարչական պատասխանատվության միջոցներ կիրառելու Ոստիկանության լիազորության մասին:

Հոդված 17.65. Տնտեսական գործունեության և ծառայությունների մատուցման, ինչպես նաև այլ կազմակերպությունների գործունեության սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների սահմանում

1. Կարանատին սահմանելու մասին որոշմամբ կարող են սահմանվել տնտեսական գործունեության առանձին տեսակների և ծառայությունների մատուցման, ինչպես նաև տնտեսական գործունեությամբ չգբաղվող այլ կազմակերպությունների գործունեության սանիտարահամաճարակային անվտանգության կանոններ:

2. Կարանատին սահմանելու մասին որոշմամբ կարող է կիրառվել կարանտին սահմանելու մասին որոշմամբ սահմանված տնտեսական գործունեության տեսակներով գբաղվող կամ ծառայություններ մատուցող տնտեսվարող սուբյեկտների և տնտեսական գործունեությամբ չգբաղվող այլ կազմակերպությունների (այսուհետ սույն հոդվածում՝ կազմակերպություններ) կողմից սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների կիրառման նկատմամբ վերահսկողության իրականացում:

3. Սույն հոդվածով նախատեսված սահմանափակումների պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է առողջապահության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը՝ բացառությամբ սննդամթերքի վաճառքով գբաղվող առևտրի օբյեկտների, սննդամթերք արտադրող տնտեսվարող սուբյեկտների կամ հանրային սննդի օբյեկտների, որոնց դեպքում սույն հոդվածով նախատեսված սահմանափակումների պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է սննդամթերքի անվտանգության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված վերահսկողությունը համապատասխան տեսչական մարմինն իրականացնում է կազմակերպություններ ստուգայցերի միջոցով՝ տվյալ տեսչական մարմնի

ղեկավարի գրավոր հանձնարարությամբ: Այլ տեսչական մարմինները կարող են փոխօգնության շրջանակներում ներգրավվել ոլորտային ստուգայցերի իրականացմանը՝ Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի հրամանով:

5. Ստուգայցն իրականացվում է առանց նախնական ծանուցման: Ստուգայցի նպատակը, ինչպես նաև ստուգայցն իրականացնող տեսչական մարմնի ներկայացուցչի գործողությունները չեն կարող դուրս գալ սույն գլխով սահմանված և կարանտին սահմանելու մասին որոշմամբ կիրառվող միջոցառումների կազմակերպման և իրականացման և սահմանափակումների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացման նպատակից:

6. Ստուգայցի ընթացքում կարանտին սահմանելու մասին որոշմամբ կիրառվող միջոցառումների և սահմանափակումների խախտումներ հայտնաբերելու դեպքում վերահսկողություն իրականացնող համապատասխան տեսչական մարմնի ներկայացուցիչը նախազգուշացնում է կազմակերպությանը (այդ թվում՝ գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում ֆիզիկական անձանց կողմից իրականացվող վաճառքը)՝ միջոցառումների և սահմանափակումների խախտման մասին, տալիս հանձնարարականներ բացահայտված խախտումները վերացնելու վերաբերյալ՝ դրանց կատարման համար սահմանելով ժամկետներ:

7. Ստուգայցի արդյունքում կարանտին սահմանելու մասին որոշմամբ կիրառվող միջոցառումների և սահմանափակումների խախտումներ հայտնաբերելու դեպքում վերահսկողություն իրականացնող համապատասխան տեսչական մարմինը կիրառում է վարչական պատասխանատվության միջոցներ:

8. Կարանտին սահմանելու դեպքում կազմակերպությունների նկատմամբ վերահսկողության հսկողության իրականացմանը կարող են մասնակցել Ոստիկանությունը և կարանտին սահմանելու մասին որոշմամբ սահմանված այլ տեսչական մարմինները, որոնք կարանտին սահմանելու մասին որոշմամբ կիրառվող միջոցառումների խախտումներ հայտնաբերելու դեպքում պարտավոր են արձանագրել համապատասխան խախտումները և անմիջապես այդ մասին տեղեկացնել վերահսկողություն իրականացնող համապատասխան տեսչական մարմնին՝ սույն հոդվածի 4-ից 7-րդ մասերով սահմանված կարգով վերահսկողություն իրականացնելու համար:

9. Սույն հոդվածով նախատեսված սանիտարահամաճարակային անվտանգության կանոնները սահմանվում են լիազոր մարմնի ղեկավարի կողմից:

Հոդված 17.76. Ապրանքների փոխադրման սահմանափակումներ

1. Կարանտին սահմանելու մասին որոշմամբ կարող են սահմանվել որոշակի ապրանքների կամ դրանց առանձին խմբաքանակների արտահանման կամ ներմուծման սահմանափակումներ:

Հոդված 17.87. Կրթական հաստատությունների գործունեության սահմանափակումներ

1. Կարանտին սահմանելու մասին կառավարության որոշմամբ կարող է սահմանվել, որ պետական, համայնքային և ոչ պետական հանրակրթական (այդ թվում՝ նախադպրոցական), նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում, արտադպրոցական դաստիարակություն իրականացնող (մանկապատանեկան ստեղծագործական և գեղագիտական կենտրոններ, երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ, ակումբներ, մարզադպրոցներ, առողջարարական ճամբարներ և արտադպրոցական դաստիարակություն իրականացնող այլ կազմակերպություններ) կազմակերպություններում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում գործող միջազգային ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ կրթական հաստատություն) ուսումնական գործընթացը կարող է իրականացվել միայն առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով սահմանված սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների պահպանմամբ: Սույն կետով սահմանված սահմանափակումը չի տարածվում հեռավար (դիստանցիոն) ձևով իրականացվող կրթական ծրագրի, ինչպես նաև ռազմական ուսումնական հաստատությունների նկատմամբ:

2. Կրթական հաստատությունների գործունեության սահմանափակումների նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է առողջապահության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված վերահսկողությունը տեսչական մարմինն իրականացնում է կրթական հաստատություններ ստուգայցերի միջոցով՝ տեսչական մարմնի ղեկավարի գրավոր հանձնարարությամբ: Ստուգայցի նպատակը, ինչպես նաև ստուգայցն իրականացնող տեսչական մարմնի ներկայացուցչի գործողությունները չեն կարող դուրս գալ սույն գլխով սահմանված և կարանտին սահմանելու մասին որոշմամբ կիրառվող միջոցառումների կազմակերպման և իրականացման և սահմանափակումների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացման նպատակից:

4. Ստուգայցի ընթացքում կարանտին սահմանելու մասին որոշմամբ կիրառվող միջոցառումների և սահմանափակումների խախտումներ հայտնաբերելու դեպքում տեսչական մարմնի ներկայացուցիչը նախազգուշացնում է կրթական հաստատությանը՝ միջոցառումների և սահմանափակումների խախտման մասին, տալիս հանձնարարականներ բացահայտված խախտումները վերացնելու վերաբերյալ՝ դրանց կատարման համար սահմանելով ժամկետներ:

5. Ստուգայցի արդյունքում կարանտին սահմանելու մասին որոշմամբ կիրառվող միջոցառումների և սահմանափակումների խախտումներ հայտնաբերելու դեպքում կիրառում է վարչական պատասխանատվության միջոցներ:

6. Կարանտին սահմանելու դեպքում կրթական հաստատության գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացմանը կարող է մասնակցել նաև կրթության ոլորտի տեսչական մարմինը, որը կարանտին սահմանելու մասին որոշմամբ կիրառվող միջոցառումների և սահմանափակումների խախտումներ հայտնաբերելու դեպքում պարտավոր է արձանագրել համապատասխան խախտումները և անմիջապես այդ մասին տեղեկացնել առողջապահության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնին:

Հոդված 17.98. Սահմանափակումներ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում և այլ հաստատություններում

1. Կարանտինի պայմաններում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում որպես սահմանափակում կարող է կիրառվել համապատասխան մարմնի աշխատանքների կազմակերպման, գործառույթների իրականացման ձևերի և եղանակների ժամանակավոր փոփոխություն՝ կարանտին սահմանելու

մասին որոշմամբ սահմանված կարգին համապատասխան: Սույն մասում սահմանված սահմանափակումները կիրառվում են՝

1) պետական կառավարման համակարգի մարմիններում՝ կարանտին սահմանելու մասին որոշմամբ,

4) տեղական ինքնակառավարման մարմիններում՝ համայնքի ավագանու,

5) այլ մարմիններում՝ համապատասխան մարմնի ղեկավարի որոշմամբ:

2. Կարանտին սահմանելու մասին որոշմամբ նախատեսված լինելու դեպքում կարող են կիրառվել այլ հաստատությունների գործունեության սահմանափակումներ՝ համապատասխան հաստատության ղեկավարի որոշմամբ: Սույն մասի իմաստով այլ հաստատությունների և կիրառվող սահմանափակումների ցանկը սահմանվում է կարանտին սահմանելու մասին որոշմամբ:

Հոդված 17.109. Սույն գլխով նախատեսված ակտերի և գործողությունների (անգործության) բողոքարկումը

1. Կարանտինի պայմաններում սույն գլխով սահմանված միջոցառումների կիրառման շրջանակներում սույն գլխով նախատեսված մարմինների ակտերը ենթակա են անհապաղ կատարման, բացառությամբ կարանտին սահմանելու մասին որոշմամբ կիրառվող միջոցառումների խախտման դեպքում կայացված ակտերի::

2. Կարանտինի պայմաններում սույն գլխով սահմանված միջոցառումների կիրառման շրջանակներում սույն գլխով նախատեսված մարմինների ակտերը, գործողությունները (անգործությունը) կարող են բողոքարկվել վարչական կարգով կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում: Սույն մասով նախատեսված բողոքարկումը չի կասեցնում համապատասխան ակտի կատարումը, բացառությամբ կարանտին սահմանելու մասին որոշմամբ կիրառվող միջոցառումների խախտման դեպքում կայացված ակտերի:»:

Հոդված 12. Օրենքի 19-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«**Հոդված 19.** Անձանց իրավունքների երաշխիքները արտակարգ իրավիճակներում

1. Յուրաքանչյուր ֆիզիկական անձ իրավունք ունի ստանալ ճշգրիտ տեղեկություն արտակարգ իրավիճակների, դրանց առաջացման վտանգի և իր պաշտպանվածության աստիճանի մասին, եթե այդպիսի տեղեկության տրամադրումը արգելված չէ օրենքով:

2. Ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնց գույքը կամ այլ միջոցներն օգտագործվել են արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման նպատակով, իրավունք ունեն ստանալու համարժեք փոխհատուցում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերում և կարգով:»:

Հոդված 13. Օրենքի 22-րդ հոդվածում լրացնել նոր երկրորդ նախադասություն.

«Կարանտին սահմանելու դեպքում սույն հոդվածով նախատեսված նյութատեխնիկական ապահովման և ֆինանսավորման դեպքերը, կարգն ու պայմանները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:»:

Հոդված 14. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից հետո՝ անմիջապես:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍԱՆԻՏԱՐԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Կ-719-01.09.2020,04.09.2020-ՊԻ-011/1, Կ-719¹-01.09.2020,04.09.2020-ՊԻ-011/1, Կ-719²-01.09.2020-ՊԻ-011/1, Կ-719³-01.09.2020,04.09.2020-ՊԻ-011/1, Կ-719⁴-01.09.2020,04.09.2020-ՊԻ-011/1, Կ-719⁵-01.09.2020-ՊԻ-011/1, Կ-719⁶-01.09.2020-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Կառավարություն	«Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության	Ոստիկանության կողմից իրականացվող վերահսկողություն տերմինը առաջարկվել է փոփոխել հսկողություն տերմինով:	Ընդունվել է:	Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է:

		ապահովման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծում (այսուհետ՝ Նախագիծ 1)			
2.	պատգամավոր Նարեկ Զեյնալյան	Նախագիծ 1	Նախագիծ 1-ի ամբողջ տեքստում «լիազոր մարմնի ղեկավարի» բառերը փոխարինել «լիազոր մարմնի» բառերով:	Չի ընդունվել: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասից բխում է, որ ենթաօրենսդրական ակտ կարող է ընդունել նաև նախարարը՝ լիազոր մարմնի ղեկավարը:	Հանձնաժողովն առաջարկությունը չի ընդունել:
3.	պատգամավոր Նարեկ Զեյնալյան	Նախագիծ 1	Նախահիծ 1-ի 3-րդ հոդվածով լրացվող 20.1-ին հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում «անապահով» բառը փոխարինել «անբարենպաստ» բառով:	Ընդունվել է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է:
4.	պատգամավոր Նարեկ Զեյնալյան	Նախագիծ 1	Նախահիծ 1-ի 3-րդ հոդվածով լրացվող 20.1-ին հոդվածի 2-րդ մասում լրացնել նոր 10-րդ կետ. «10) կոնտակտավորների հայտնաբերում»:	Չի ընդունվել: Նշված միջոցառումը իրականացվում է նույն մասում սահմանված այլ միջոցառումների շրջանակում:	Հանձնաժողովն առաջարկությունը չի ընդունել:
5.	պատգամավոր Նարեկ Զեյնալյան	Նախագիծ 1	Նախահիծ 1-ի 3-րդ հոդվածով լրացվող 20.1-ին հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետում հստակեցնել «իմունականխարգելման	Չի ընդունվել: Նախագծում կատարվել է հստակեցում, որպեսզի պարզ լինի որ քաղաքացիական	Հանձնաժողովն առաջարկությունը չի ընդունել:

			իրականացում» հասկացությունը: Նախահիծ 1-ի 3-րդ հոդվածով լրացվող 20.1-ին հոդվածի 3-րդ մասի համաձայն «...կատարվում են համապատասխան միջոցառումներ...» Հստակեցնել իմունականխարգելումը պարտադիր է, թե՛ ոչ:	դատավարության օրենսգրքով սահմանված կարգը չվերաբերի նաև իմունականխարգելմանը:	
6.	պատգամավոր Նարեկ Ջեյնալյան	Նախագիծ 1	Նախահիծ 1-ի 3-րդ հոդվածով լրացվող 20.1-ին հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետում ֆիքսել, թե որ մարմինը և ուն է ապահովում պաշտպանիչ միջոցներով: Նույն ձևակերպումն ավելացնել Նախագիծ 2-ով նախատեսվող 12-17-րդ հոդվածներում:	Չի ընդունվել: Նույն հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ նախատեսված անհատական պաշտպանության միջոցների ցանկը, դրանց կիրառման դեպքերն ու կարգը, ինչպես նաև սանիտարահամաճարակ ային անվտանգության կանոնները սահմանվում են առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարի կողմից՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով:	Հանձնաժողովն առաջարկությունը չի ընդունել:
7.	պատգամավոր Նարեկ Ջեյնալյան	Նախագիծ 1	Նախահիծ 1-ի 3-րդ հոդվածով լրացվող 20.2-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն «կարանտին սահմանելու որոշումը կայացվում է լիազոր մարմնի	Ընդունվել է: Նախագծում կատարվել է շարահյուսական փոփոխություն:	Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է:

			կողմից»: Քանի որ կարանտինը ենթադրում է նաև որոշակի սահմանափակող միջոցառումներ, առաջարկվում է կարանտին սահմանելու մասին որոշումը կայացնել կառավարության կողմից:		
8.	պատգամավոր Նարեկ Զեյնալյան	Նախագիծ 1	Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 20.6-րդ հոդվածի 1-ին մասում հստակեցնել <<կոնտակտավոր>> հասկացությունը: Այն սահմանել հետևյալ կերպ. <<տվյալ հիվանդության ինկուբացիոն շրջանի ժամանակահատվածում վարակակրի հետ անմիջական շփված անձ>>:	Ընդունվել է:	Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է:
9.	պատգամավոր Նարեկ Զեյնալյան	Նախագիծ 1	Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 20.7-րդ հոդվածի 2-րդ մասում հանել <<իր համաձայնությամբ>> բառերը:	Ընդունվել է:	Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է:
10.	պատգամավոր Նարեկ Զեյնալյան	Նախագիծ 1	Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 20.6-րդ հոդվածի 4-րդ մասում <<կարգի մանրամասները>> բառերը փոխարինել <<կարգը>> բառով:	Չի ընդունվել: Կարգը արդեն իսկ սահմանվում է օրենքով, այլ բան է կարգի մանրամասները, որոնք սահմանվում են ենթաօրենսդրական ակտով:	Հանձնաժողովն առաջարկությունը չի ընդունել:
11.	պատգամավոր Նարեկ Զեյնալյան	Նախագիծ 1	Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 20.7-րդ հոդվածում առաջարկում են պարտադիր հոսպիտալացման և մեկուսացման (ինքնամեկուսացման)	Չի ընդունվել: Օրենքով նախատեսվում է կարգը, մասնավորապես, նշված հոդվածում նշվել են	Հանձնաժողովն առաջարկությունը չի ընդունել:

			կարգը սահմանել օրենքի հավելվածով, հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի առաջին մասի պահանջը:	ինքնամեկուսացման թե՛ դեպքը, թե՛ հրականացման կարգը:	
12.	պատգամավոր Նարեկ Զեյնալյան	Նախագիծ 1	Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 20.7-րդ հոդվածի 2-րդ մասում առաջարկում են հաստակեցնել թե, ինչ եղանակով է տեղեկացվում ինքնամեկուսացման ենթակա անձը:	Չի ընդունվել: Նշված մասում ամրագրվել է Սահմանադրությամբ ամրագրված երաշխիքը, իսկ տեղեկացման յուրաքանչյուր դեպք կարող է տարբեր լինել՝ կախված հիվանդության բնույթից:	Հանձնաժողովն առաջարկությունը չի ընդունել:
13.	պատգամավոր Նարեկ Զեյնալյան	Նախագիծ 1	Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 20.7-րդ հոդվածի 3-րդ մասում առաջարկում են «բանավոր» բառը փոխարինել «գրավոր» բառով:	Չի ընդունվել: Օրբյեկտիվորեն առկա չէ հնարավորություն ցանկացած դեպքում ինքնամեկուսացման հրահանգը գրավոր տալու՝ ի տարբերություն մեկուսացման, սակայն հոդվածով նախատեսվել է երաշխիք, որ անձի պահանջով այն կարող է ձևակերպվել գրավոր:	Հանձնաժողովն առաջարկությունը չի ընդունել:
14.	պատգամավոր Նարեկ Զեյնալյան	Նախագիծ 1	Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 20.7-րդ հոդվածի 3-րդ մասը առաջարկվում է խմբագրել հետևյալ կերպ. «Մեկուսացման կարգը սահմանվում է սույն օրենքի հավելվածով: Հինք	Չի ընդունվել: Օրենքով նախատեսվում է կարգը, մասնավորապես, նշված հոդվածում նշվել են ինքնամեկուսացման թե՛ դեպքը, թե՛	Հանձնաժողովն առաջարկությունը չի ընդունել:

			<p>ընդունելով Սահմանադրության 27-րդ հոդվածը՝ մեկուսացված անձն իրազեկվում է իր իրավունքների, պարտականությունների, մեկուսացման կանոնները խախտելու հետևանքով առաջացող հնարավոր պատասխանատվության և մեկուսացման ժամկետի մասին: Իրազեկման թերթիկի ձևը, իրազեկման կարգը հաստատում է առողջապահության բնագավառի պետական լիազոր մարմինը: >>:</p>	<p>իրականացման կարգը:</p>	
15.	պատգամավոր Նարեկ Զեյնալյան	Նախագիծ 1	<p>Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 20.7-րդ հոդվածի 6-րդ մասը լրացնել հետևյալ նախատեսությամբ. <<Ոստիկանությունը, սույն մասով սահմանված գործառույթներն իրականացնելիս, անհրաժեշտության դեպքում, կարող է դիմել պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմիններին:>>: Վերահսկողությունը նաև կարող է իրականացվել հատուկ ծրագրային ապահովման միջոցով:</p>	<p>Չի ընդունվել: Նշված հոդվածի նույն մասով նախատեսված է, որ Ոստիկանությունը անհրաժեշտության դեպքում կարող է դիմել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին:</p>	<p>Հանձնաժողովն առաջարկությունը չի ընդունել:</p>
16.	պատգամավոր Նարեկ Զեյնալյան	Նախագիծ 1	<p>Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 20.7-րդ հոդվածը լրացնել նոր մասով. <<7) Եթե ինքնամեկուսացման մեջ</p>	<p>Չի ընդունվել: Նման դեպքում, հաշվի առնելով հնարավոր ինքնամեկուսացման</p>	<p>Հանձնաժողովն առաջարկությունը չի ընդունել:</p>

			<p>գտնվողը չի կարող հոգալ իր կենսապահովման նվազագույն պահանջները, ապա դա իրականացվում է Սոցիալական բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի կողմից:</p>	<p>դեպքերի քանակը և ծավալները, հնարավոր չէ օրենքով նախատեսել պարտադիր ապահովման պահանջ: Փոխարենը, կառավարությունը ըստ անհրաժեշտության յուրաքանչյուր դեպքում կարող է հոգալ նաև ինքնամեկուսացվածների կենսապահովման պահանջները:</p>	
17.	պատգամավոր Նարեկ Զեյնալյան	Նախագիծ 1	<p>Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 20.8-րդ հոդվածի 2-րդ մասում հստակեցնել՝ որոնք են մեկուսացված անձի պարտականությունները և որ մարմնի կողմից են սահմանվում դրանք:</p>	<p>Չի ընդունվել: Նշված պայմաններում ապահովված են բոլոր սահմանադրական փրաշխիքներ. մասնավորապես՝ անձին կտեղեկացվի մեկուսացման վայրի մասին, ինչպես նաև մեկուսացման ժամանակ պայմանների մասին, որոնք բոլորը չէ, որ օրենքով են սահմանվում, ուստի հնարավոր չէ նաև օրենքով նախատեսենք պայմանները, որոնց պետք է ծանոթացնել: Միաժամանակ, անձին կտեղեկացվի նաև պայմանները չպահպանելու դեպքում</p>	<p>Հանձնաժողովն առաջարկությունը չի ընդունել:</p>

				վարչական և քրեական պատասխանատվության մասին:	
18.	պատգամավոր Նարեկ Զեյնալյան	Նախագիծ 1	Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 20.12-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ կերպ. <<Արտակարգ իրավիճակի հիմքով կարանտին սահմանելու դեպքում բնակրության բժշկական օգնությունը և սպասարկումը իրականացվում <<ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆ ՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ օրենքով սակմանված կարգով>>:	Չի ընդունվել: Համապատասխան հղում պարունակող նորմը նախատեսված է «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքի 17.2-րդ հոդվածում	Հանձնաժողովն առաջարկությունը չի ընդունել:
19.	պատգամավոր Նարեկ Զեյնալյան	Նախագիծ 1	Նախագծի ամբողջ տեքստում <<լիազոր մարմնի ղեկավարի>> բառերը փոխարինել <<լիազոր մարմնի>> բառերով:	Չի ընդունվել	Հանձնաժողովն առաջարկությունը չի ընդունել:
20.	պատգամավոր Նարեկ Զեյնալյան	Նախագիծ 1	Նախագծի 12-րդ հոդվածում ավելացնել նոր կետ Է) հայտարարում է արտակարգ իրավիճակ Արտակարգ իրավիճակը ով և ինչպես է ֆիքսում	Չի ընդունվել: Նշվածը իրենից ենթադրում է ամբողջ օրենքի կառուցակարգի փոփոխություն: Միաժամանակ Արտակարգ իրավիճակների նախարարության կողմից նշված խնդրի լուծման համար մշակվում է օրենսդրական փաթեթ:	Հանձնաժողովն առաջարկությունը չի ընդունել:
21.	պատգամավոր Նարեկ Զեյնալյան	Նախագիծ 1	Նախագծի 11-րդ հոդվածով լրացվող 17.2-րդ հոդվածի 2-րդ մասում	Չի ընդունվել: Նշվածը դուրս է սույն	Հանձնաժողովն առաջարկությունը

			արձանագրված « Հանրության համար վտանգավոր վարակիչ հիվանդությունների»> ցանկ առկա չէ:	օրենսդրական փաթեթի առարկայից:	չի ընդունել:
22.	պատգամավոր Նարեկ Զեյնալյան	Նախագիծ 1	Նախագծի 11-րդ հոդվածով լրացվող 17.3-րդ համարակալումով հոդված առկա չէ: Նախագծի 11-րդ հոդվածով լրացվող 17.4-րդ հոդվածով սահմանված Պարտադիր հոսափտալացման և մեկուսացման (ինքնամեկուսացման) կարգն անհրաժեշտ է սահմանել օրենքի հավելվածով, հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի առաջին մասի պահանջը:	Ընդունվել է	Հանձնաժողովը առաջարկությունն ընդունել է:
23.	պատգամավոր Նարեկ Զեյնալյան	Նախագիծ 1	Նախագծի 11-րդ հոդվածով լրացվող 17.4-րդ հոդվածի 1-ին մասում առաջարկում ենք նախատեսել Հատուկ կարգ, այլ ոչ թե արգելք և սահմանափակում: Առաջարկվում է «արգելքներ և սահմանափակումներ» բառերը փոխարինել «հատուկ կարգ» բառերով:	Չի ընդունվել: Նշված հոդվածում նախատեսված միջոցառումները իրենց բնույթով սահմանափակումներ են:	Հանձնաժողովն առաջարկությունը չի ընդունել:
24.	Բարգավաճ Հայաստան խմբակցություն	Նախագիծ 1	Առաջարկվում է «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի	Ընդունվել է:	Հանձնաժողովն առաջարկությունը ընդունել է:

			նախագծի 1-ին հոդվածով լրացվող հոդված 20.1-ի 1-ին մասում 5-րդ մասից հանել «վարակիչ հիվանդությունների լիազոր մարմնի ղեկավարի կողմից սահմանված ախտանիշներին կամ առողջական վիճակին համապատասխանող անձինք (այսուհետ՝ կասկածելի անձինք),» բառերը.		
25.	Բարգավաճ Հայաստան խմբակցություն	Նախագիծ 1	Առաջարկվում է «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով լրացվող հոդված 20.1-ի 1-ին մասում 7-րդ մասից հանել «կասկածելի, ինչպես նաև» բառերը.	Ընդունվել է մասնակի: Նախագծում շտկվել է հասկացությունը	Հանձնաժողովն ընդունվել է մասնակի:
26.	Բարգավաճ Հայաստան խմբակցություն	Նախագիծ 1	Առաջարկվում է «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով լրացվող հոդված 20.1-ի 1-ին մասում 8-րդ մասից հանել «կասկածելի անձանց, ինչպես նաև» բառերը.	Ընդունվել է մասնակի Նախագծում շտկվել է հասկացությունը:	Հանձնաժողովն ընդունվել է մասնակի:
27.	Բարգավաճ Հայաստան խմբակցություն	Նախագիծ 1	Առաջարկվում է «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքի նախագծի 20.3 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում՝ «անձանց» բառից հետո լրացնել	Չի ընդունվել: Նախագծում անհատական պաշտպանության միջոցները նախատեսվել են որպես առանձին միջոցառում, որը	Հանձնաժողովն առաջարկությունը չի ընդունել:

			«ազատ գործելու» բառերը.	համաձայն Սահմանադրության 39- րդ հոդվածի օրենքով նախատեսված պարտականություն է	
28.	Բարգավաճ Հայաստան խմբակցություն	Նախագիծ 1	Առաջարկվում է «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքի նախագծի 20.5 հոդվածում վերնագրում և 1-ին մասում «անձանց» բառից հետո լրացնել «ազատ գործելու» բառերը.	Չի ընդունվել: Նախագծում անհատական պաշտպանության միջոցները նախատեսվել են որպես առանձին միջոցառում, որը համաձայն Սահմանադրության 39- րդ հոդվածի օրենքով նախատեսված պարտականություն:	Հանձնաժողովն առաջարկությունը չի ընդունել:
29.	Բարգավաճ Հայաստան խմբակցություն	Նախագիծ 1	Առաջարկվում է «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքի նախագծի 20.5 հոդվածում լրացնել նոր 3-րդ մաս. «3. Հայաստանի Հանրապետությունում գտնվող ֆիզիկական և իրավաբանական անձինք պարտավոր են պահպանել և կատարել կարանտին սահմանելու մասին որոշմամբ սահմանված անհատական պաշտպանության միջոցների օգտագործման պահանջը:».	Չի ընդունվել: «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքում նշվում է անհատական պաշտպանության միջոցների կիրառման պարտադիրության պահանջի կարգը	Հանձնաժողովն առաջարկությունը չի ընդունել:

30.	Բարգավաճ Հայաստան խմբակցություն	Նախագիծ 1	Առաջարկվում է «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքի նախագծի 20.7 հոդվածում լրացնել նոր 7-րդ մաս. «7. Ինքնամեկուսացման վայրում անձի համար ապահովվում են սննդի, կեցության համար բավարար պայմաններ, բժշկական խորհրդատվություն: Անհրաժեշտության դեպքում՝ ինքնամեկուսացված անձի համար ապահովվում է բժշկական օգնություն և սպասարկում ստանալու հնարավորությունը:».	Ընդունվել է մասնակի: Նման դեպքում, հաշվի առնելով հնարավոր ինքնամեկուսացման դեպքերի քանակը և ծավալները, հնարավոր չէ օրենքով նախատեսել պարտադիր ապահովման պահանջ: Փոխարենը, կառավարությունը ըստ անհրաժեշտության յուրաքանչյուր դեպքում կարող է հոգալ նաև ինքնամեկուսացվածների կենսաապահովման պահանջները:	Հանձնաժողովն առաջարկությունը ընդունել է մասնակի:
31.	Բարգավաճ Հայաստան խմբակցություն	Նախագիծ 1	Առաջարկվում է «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքի նախագծից հանել 20.11-րդ հոդվածը.	Ընդունվել է:	Հանձնաժողովը առաջարկությունն ընդունել է:
32.	Բարգավաճ Հայաստան խմբակցություն	Նախագիծ 1	Առաջարկվում է ոչ միայն իրավունքի սահմանափակումները, այլև դրա այդ թվում անհատական միջոցների կիրառման և օգտագործման կարգը նույնպես սահմանել օրենքով՝ Սահմանադրությամբ սահմանված իրավունքների սահմանափակման օրինական ձևը պահպանելու համար.	Չի ընդունվել: Համաձայն մարդու իրավունքների մասին Սահմանադրության նորմերի՝ օրենքով սահմանվում են այդ իրավունքների սահմանափակման դեպքերը	Հանձնաժողովն առաջարկությունը չի ընդունել:

33.	Բարգավաճ Հայաստան խմբակցություն	Նախագիծ 2	Առաջարկվում է «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 17.5-րդ հոդվածի 1-ին, 4-րդ և 5-րդ մասերից հանել «կամ արգելքների» բառերը.	Չի ընդունվել: Նշված մասերում արգելքը վերաբերում է միայն հանրային միջոցառումների, այլ ոչ հավաքներին	Հանձնաժողովն առաջարկությունը չի ընդունել:
34.	Բարգավաճ Հայաստան խմբակցություն	Նախագիծ 1	Առաջարկվում է նախագծերի փաթեթից հանել ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը, քանի որ նախագծով հետապնդվող խնդիրը ամբողջությամբ լուծված է ՀՀ քրեական օրենսգրքի 124.1-րդ հոդվածով.	Չի ընդունվել: Քրեական օրենսգրքի 124.1 հոդվածը վերաբերում է միայն Նոր կորոնավիրուսային վարակին, սակայն մեր առաջարկած նախագիծը վերաբերում է առհասարակ վարակիչ հիվանդություններին: Միևնույն ժամանակ հաշվի առնելով այն հանգամանքը, որ առաջարկված հանցակազմի դիսպոզիցիայում առկա գործողությունները կատարվում են մեղքի դիտավորյալ ձևով և հանրորեն վտանգավոր հետևանքներ կարող են առաջացնել ուստի անհրաժեշտ է նախատեսել քրեական օրենսգրքով:	Հանձնաժողովն առաջարկությունը չի ընդունել:

35.	Բարգավաճ Հայաստան խմբակցություն	Նախագիծ 1	<p>Առաջարկվում է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.</p> <p>«1. Կարանտին սահմանելու մասին որոշմամբ սահմանված համաճարակի (կարանտինային) գոտի մուտքի և ելքի հատուկ ռեժիմը խախտելը՝ առաջացնում է նախազգուշացում, իսկ կրկնվելու դեպքում՝ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև յոթանասունապատիկի չափով:</p> <p>2. Կարանտինի ընթացքում անձանց ազատ տեղաշարժվելու իրավունքի կամ տրանսպորտային միջոցների տեղաշարժման սահմանափակումները խախտելը, ինչպես նաև դրանց զննման իրականացմանը խոչընդոտելը՝ առաջացնում է նախազգուշացում, իսկ կրկնվելու դեպքում՝ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:</p> <p>3. Կարանտինի ընթացքում տնտեսական գործունեության առանձին տեսակների իրականացման</p>	<p>Չի ընդունվել:</p> <p>Նշված զանցակազմերը նախատեսելիս հաշվի են առնվել դրանց ծանրությունն ու հնարավոր հետևանքները:</p>	<p>Հանձնաժողովն առաջարկությունը չի ընդունել:</p>
-----	---------------------------------	-----------	--	--	--

			<p>և ծառայությունների մատուցման, ինչպես նաև տնտեսական գործունեությամբ չգբաղվող այլ կազմակերպությունների գործունեության սահմանափակումները խախտելը՝ առաջացնում է նախազգուշացում, իսկ կրկնակի դեպքում՝ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:</p> <p>4. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված արարքը վարչական տույժ նշանակելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրիսունապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով:</p> <p>5. Կարանտինի ընթացքում հավաքներ կամ հանրային միջոցառումներ կազմակերպելու կամ անցկացնելու սահմանափակումները խախտելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից մինչև հինսապատիկի չափով:</p> <p>6. Կարանտինի ընթացքում հավաքների կամ հանրային միջոցառումների մասնակցելու սահմանափակումները խախտելը առաջացնում է նախազգուշացում,</p>		
--	--	--	---	--	--

			<p>իսկ կրկնվելու դեպքում՝ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:</p> <p>7. 8. Կարանտինի ընթացքում կանոնավոր փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների սահմանափակումները խախտելը, ինչպես նաև դրանց զննման իրականացմանը խոչընդոտելը՝ առաջացնում է նախազգուշացում, իսկ կրկնվելու դեպքում՝ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:</p> <p>9. Կարանտինի ընթացքում մեկուսացման կամ ինքնամեկուսացման կանոնները խախտելը՝ առաջացնում է նախազգուշացում, իսկ կրկնվելու դեպքում՝ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:»:</p> <p>10. Կարանտին սահմանելու մասին որոշմամբ սահմանված անհատական պաշտպանության միջոցների օգտագործման պահանջը խախտելը՝ առաջացնում է նախազգուշացում, իսկ կրկնվելու դեպքում՝ տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հինգապատիկի չափով:</p>		
--	--	--	---	--	--

			<p>11. Կարանտինի ընթացքում կրթական հաստատությունների կողմից սահմանված միջոցառումները և սահմանափակումները խախտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրապատիկի չափով:»:</p>		
36.	Բարգավաճ Հայաստան խմբակցություն	Նախագիծ 1	<p>Առաջարկվում է «Հ վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով լրացվող հոդված 222.14-ում «տասնօրյա» բառը փոխարինել «մեկամսյա» բառով:</p>	<p>Ընդունվել է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p>	<p>Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է:</p>